

ՆՐԻՏԱՍԱՐԴ ԳՐԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ VIII ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Մայիսի 28—30-ը ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների հանրապետական VIII նստաշրջանը: Այն ներածական խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս է. Գ. ԶՐԱԲՇՅԱՆԸ: Նա նշեց, որ նման բնույթի հանրապետական կոնֆերանսները մեծ հետաքրքրություն են առաջացնում հայ գրական կյանքում: Դրանք նպատակ ունեն պարզելու հանրապետության երիտասարդ գրականագետների հնարավորությունները, կոորդինացնելու նրանց աշխատանքները, գիտահետազոտական պրպտումները:

Անցկացված վեց նիստերին մասնակցեցին Երևանի տարբեր հաստատությունների՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի և գրականության ինստիտուտների, պետհամալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի, հրատարակչությունների, թանգարանների, ադիվների, լենինականի, Կիրովականի, Ստեփանավանի, Գանձայի 35 երիտասարդ գիտաշխատողներ: Նրանց ղեկուցումներն աչքի ընկան թեմատիկ բազմազանությամբ, հետաքրքիր հարցադրումներով, նորաձայտ նյութերի լուսարանմամբ, հայ գրականագիտության մշակած ու ըննած հարցադրումների յուրովի մեկնաբանությամբ:

Նստաշրջանի կազմակերպիչները աշխատել էին յուրաքանչյուր նիստին տալ որոշակի թեմատիկ ուղղվածություն: Այսպես՝ առաջին նիստում շոշափվեցին հիմնականում հայ միջնադարյան դրականությանը վերաբերող հարցեր, ինչպես օրինակ՝ Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնյան»-ի ժանրային առանձնահատկությունները (Աղառ Ալեքսանյան), «Տեսանոցի» կերպարը հայկական տեսիլներում (Սեդա Մեմբերյան)։ «Մարդը 11—15-րդ դարերի հայկական վարքերում» (Մկրտիչ Բաճեկյան)։ Ընդ որում, ղեկուցողներից ոմանք իրենց աշխատանքի նյութ էին դարձրել ոչ թե բուն միջնադարյան գրականությունը, այլ նրա ժողովրդականացման, լուսարանման անհրաժեշտությունը մեր դարասկզբին «Անահիտ» հանդեսում (Յուրի Ավետիսյան) և հայ դրողների կովկասյան ընկերության ասուլիսներում (Սուրենյան Հովհաննեսյան)։

Առանձին նիստերում քննվեցին նաև հայ նոր գրականության մի շարք հեղինակների՝ Տ. Զյո-

հուրյան (Թադևո Խաչատրյան), Դ. Զոհրապ (Գրիգոր Հակոբյան), Ա. Յարճանյան (Սիամանթո) (Ամալյա Ալեքսանյան), Վ. Տերյան (Վալարշակ Թանգամյան), Կոնկրետ. գործեր ու նրանց արվեստին վերաբերող զանազան հարցեր: Այս ղեկուցումները բնորոշվում են նաև տիպաբանական-տեսական հետաքրքիր հարցադրումներով ու վերլուծություններով: Ընթերցվեցին և զուտ տեսական, ինչպես նաև բանասիրական, քննադատական բնույթի ղեկուցումներ: Հետաքրքրությամբ լսվեցին հատկապես Րաֆֆու պատմավեպերում գրավոր աղբյուրների օգտագործման սկզբունքների (Գուրգեն Գալստյան) և Ավ. Իսահակյանի գրառումներում Փոքր Մհերի բնավորության երկվության (Էմմա Հովսեփյան), Դ. Աղայանի մի քանի հեքիաթների ինքնագրերի (Նարինե Պետրոսյան) մասին ղեկուցումները: Վարպետորեն օգտագործելով հայտնի և անհայտ փաստաթղթերն ու վավերաթղթերը, երիտասարդ տեքստաբանները դրսևորեցին քննադատական աշխատանքի որոշակի հմտություն:

Նիստերից մեկը ամբողջությամբ նվիրվեց հայ գրականության միջազգային կապերին: Հանգամանալից ու հետաքրքիր փաստերով ներկայացվեցին հայկական դուցազնավեպի անգլերեն թարգմանություններից մեկը (Անահիտ Աղայան)։ Ռոմանտիզմի դարաշրջանի Ֆրանսիայի գրական-հասարակական երևույթների ընկալումը 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ իրականության մեջ (Անահիտ Դադեյան), Բալթիկի հայկական նամականիին և հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում 18—19-րդ դարերում (Անահիտ Բեխարյան), Չեխովի «Շալա» կառուցվածքային տիպաբանությունը (Ալլա Բալեյան), Նիկոլայ Տիխոնովը իբրև հայ պոեզիայի թարգմանիչ (Ռաբիրա Բաղդասարյան), Սունդուկյանը և ֆրանսիական մշակույթը (Արտաշես Մառտիրոսյան), հայ-ադրբեջանական պոեզիան Հայրենական պատերազմի տարիներին (Հայկ Աղաճյան) և այլն: Խրախուսելի էր երիտասարդ գրականագետների՝ արտասահմանյան քննադատությանը դիմելու, այն գնահատելու, գրական երկերի համեմատական-տիպաբանական վերլուծությունը փիլիսոփայական ակունքներէ հայտնաբերմանը զուգակցելու, նկարագրալուծությունից խուսափելու փորձերը:

Ցեկուցումների կեսից ավելին վերաբերում էին սովետահայ գրականությանը, արդի գրական կյանքի հուզող խնդիրներին։ Սա վկայությունն է այն բանի, որ նոր սերնդի կողմից դասական գրականության ուսումնասիրությունը զուգակցվում է սովետական ու սովետահայ ժամանակակից գրականության հանդեպ ունեցած աշխույժ հետաքրքրությանը։ Այս շարքի զեկուցումներում տեղ գտան այնպիսի հարցեր, ինչպիսիք են Զ. Քոչարի, Խ. Դաշտենցի, Մ. Գալշոյանի արձակ ստեղծագործություններում ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը (Անահիտ Հակոբյան), դասերի ու դասակարգերի փոխհարաբերության գեղարվեստական արտացոլումը Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» (Արմեն Ղազարյան), Ե. Չարենցի «Էպիքական լուսարագ» ժողովածուի արձագանքները (Սուսաննա Գաբրիելյան), Սիրլա կապուտիկյանի քնարերգության հերոսը և քաղաքացիականության խնդիրը (Գուրգեն Կառապետյան), Պ. Սևակի «Ուշացած իմ սեր» պոեմի արձագանքները միութենական մամուլում (Գուրաշ Հակոբյան), սովետահայ քնարա-շիրիսոփայական արձակի ուղղությունը և Աղասի Ավագյանի ստեղծագործությունը (Համո Մաքեռյան), միջաստեղծումը ժամանակակից հայ արձակում (Մանե Սարգսյան), Հրաչյա Քոչարի պատերազմական տարիների պատմվածքները (Արմեն Պաղտյան), բարոյահոգեբանական հարցադրումները Վարդգես Պետրոսյանի ստեղծագործության մեջ (Նաիրա Սեխյան), 60—70-ական թվականների հայ կատակերգության թեմատիկան (Աշոտ Միքեայան)։ Գրական ասուլիսի,

բանավեճի առիթ դարձան «Անկոնֆլիկտայնության» տեսությանը դրսևորումները հետպատերազմյան տարիների սովետահայ պոեզիայում (Իսալիք Պետրոսյան)։ Վ. Խեչումյանի «Զվարթնոց» ժողովածուն (Թադևոս Տոնոյան) ռեկուցումները։

Ջեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին բոլոր նիստերի նախագահները՝ բանասիրական գիտությունների դոկտորներ Սերգեյ Սարխյանը, Խաժալ Գյուլնազարյանը, Նլենա Ալեքսանյանը, Դավիթ Գասպարյանը, Բոնասիրական գիտությունների թեկնածուներ Վազգեն Մնացականյանը, Վարազ Ներսիսյանը, Սուրեն Շտիկյանը և ուրիշներ։ Անդրադառնալով ընթերցված գեկուցումներին, ելույթ ունեցողները բացատրություն ոչ միայն դրանց արժանիքները, այլև տեղ գտած ուղի թերությունները՝ թեմայի շփոթում պրոբլեմի հետ, նյութի էմպիրիկ կուտակում, ընդհանրացման, գրականագիտական թույլի, հարցի համարձակ մեկնության, ընդգծված ինքնուրույնության, լայն մասշտաբայնության խոր ընդգրկումների պակաս և այլն։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. ԶՐԱՆՇԱՆԸ, ելույթ ունեցավ արդյունավետ, գիտական բարձր մակարդակով, և որ ավելի մեծացավ համանման գիտական նստաշրջանների պարբերաբար կազմակերպելու կարևորությունն ու անհրաժեշտությունը։

ՍՈՒՍԱՆԱ ՀՈՎՀԱՆԿՍՅԱՆ